ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե **abovyan.kotayq@mta.gov.am**

21 ապրիլի 2021թ.N Ե-979

ԳՐԻՇԱ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ
ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹ, **12, 21**

Շնորհակալություն առաջարկի համար: Ցանկանում եմ տեղեկացնել, որ Աբովյան համայնքում 2020 թվականի սեպտեմբերից մանկապարտեզներ ընդունվելու համար երեխաների հերթագրումն իրականացվում է բացառապես էլեկտրոնային եղանակով՝ համայնքապետարանի www.abovyan-kotayk.am պաշտոնական կայքում առկա՝ «Մանկապարտեզներ» էլեկտրոնային գործիքի միջոցով: Առցանց հերթագրումը սկսելուց առաջ, ինչպես նաև ընթացքում Աբովյանի համայքապետարանի պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան հարթակում կատարվել են իրազեկման աշխատանքներ, որոնք շարունակական բնույթ են կրում: Այն քաղաքացիները, ովքեր չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ և համացանցի հասանելիություն այցելում են համայնքապետարանի կրթության բաժին, որտեղ և ցուցաբերվում է համապատասխան ծառայություն: Առցանց հերթագրումը սկսելուց հետո, վիճակագրությունը ցույց է տվել, որ տեղում առցանց հերթագրվելու համար դիմել են քիչ թվով ծնողներ: Հետագայում նախատեսվում է «Մանկապարտեզների առցանց հերթագրում» ծառայության մատուցումը իրականացնել անմիջականորեն մանկապարտեզների կողմից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կատ. Կրթության, մշակույթի, առողջապահության, սպորտի և էկոլոգիայի բաժնի պետ
Մ. Բաղդասարյան
060-53-64-05